

ԶԱՐԹՈՆԿ -ը կարելի է կարդալ նաեւ համացանցի վրայ հետեւեալ հասցեով՝
www.zartonkdaily.com
հնչալեւ նաեւ ձեր անհատական թղթակցութիւններն ու ծանուցումները կրնաք փոխանցել խմբագրութեան հետեւեալ հասցեներուն՝
e-mail: zartonkadl@gmail.com
zartonkdaily@yahoo.com
P.O.Box: 11-617 & 175-348 Beirut-Lebanon
Tel./Fax: +961 1 444225

ԶԱՐԹՈՆԿ

Օրաթերթ

ZARTONK JOURNAL POLITIQUE ARMENIEN
77րդ Տարի, քիւ 167 (21,126)
ՀԱՐԱԹ, 9 ՕԳՈՍՏՈՍ 2014
Zartonk جريدة سياسية أرمنية
4 էջ 1000 L.Ո.

ՈՒՌՈՒԼԻԵ Կ'ՈՂՁՈՒՆԷ ՓՈՒԹԻՆԻ ՆԱԽԱՃԵՆՈՒԹԻՒՆԸ
ԵԱԶԿ Մինսքի հումքի ամերիկացի համաձայնագրի ճեյմս Ուորոլիք ռոյունեց Հայաստանի եւ Ազրայէճանի նախագահներուն հետ հանդիպելու Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի նախաձեռնութիւնը: «Կ'ողջունեց Հայաստանի եւ Ազրայէճանի նախագահներուն հետ հանդիպելու Փութինի նախաձեռնութիւնը: Կոչ կ'ընենք խստիւ յարգել զինադադարը», ըսաւ Ուորոլիք:

ԵՐԵՎԱՆԻ ԲԱՅԱԿԱՅԻՆՈՒԹԵՆՔ ԵՏԲ ՍԱՍ ՇԱՐԻՐԻ ՎԵՐԱԿԱՐՁԱՒ ԼԻԲԱՆԱՆ

Քաղաքական բեմի մեծագոյն իրադարձութիւնը անկասկած երեք տարի բացակայութենէ ետք, Սաստ Շարիրի վերադարձն էր Պէյրութ: Շարիրի Պէյրութ ժամանելէ անմիջապէս ետք այցելեց վարչապետարան եւ հանդիպում մը ունեցաւ վարչապետ Թամազ Սալամի հետ: Այս առիթով ան յայտարարեց, թէ երկա-



րաստե այցելութեամբ վերադարձած էր Պէյրութ, նաեւ բանակին համար սեւտական օժանդակութիւնը գործնապէս իրականացնելու նպատակով: Շարիրի այցելեց նախապէս վարչապետ Ռաֆիք Շարիրիի դամբարանը: Շարիրի Պէյրութ վերադառնալու առիթով սատարեց բարի գալուստի բազմաթիւ հեռաձայններ: Շարիրի յաջորդաբար ընդունեց Լիբանանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան Տէյվիտ Դեյլը, Սեւտական Արաբիոյ դեսպան Ալի Աուտ Օսեյրին, Մուսթաֆա Զոսանքի պետ Ֆուատ Սինիորան, ներքին գործոց նախարար Նուհատ Մաշնուբը, այլ նախարարներ, երեսփոխաններ եւ անձնակազմիներ:

Քաղաքական մեկնաբաններ դիտել կու տան, թէ Շարիրիի ժամանումը որական ազդեցութիւն պիտի ունենայ նախագահական ընտրութիւններու գործընթացին վրայ: Շատերու կարծիքով, Լիբանան կրնայ իսկապէս նոր նախագահ մը ունենալ յառաջիկայ Երեքշաբթի օրուն խորհրդարանի նիստին: Մարտիններու Պշարա Ռաֆի կարտիւնալը մտադրեց, որ Շարիրիի վերադարձը դառնայ լիբանանեան տագնապէն դուրս գալու նախանշան:

ԱՐՍԷԼ ԲԱՆԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ԴԱՍԲՈՒՆ ՎՐԱՅ

Արսելե սուրիացի ընտանիքներու հոսքը կը շարունակուի Սուրիոյ ուղղութեամբ: Բանակը, ապահովական պատճառներով արգիլեց ընտանիքներու մուտքը Արսել: Բանակը, Արսելի մէջ ձեռքարկեց արձակազէտ մը եւ խուզարկեց սուրիացի գաղթականներու գտնուող շրջանները եւ կատարեց ձեռքարկութիւններ: Նշենք, թէ ահաբեկիչները պատանդ վերցուցած են 22



բանակային եւ ներքին ապահովութեան ուժերու 17 անդամ: Կարգ մը տեղեկութիւններու համաձայն, իսլամականները կը փորձեն Ռումիէ բանտին մէջ իրենց զինակիցներուն հետ փոխանակել պատանդները:

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի յայտարարեց, թէ Արսելի դեպքերը եկան ապացուցելու, որ յետ այսու անհրաժեշտ է տարբեր ձեռով վարուիլ Սուրիայէ Լիբանան ապաստանող գաղթականներուն հետ:

Վարչապետ Թամազ Սալամ յայտարարեց, թէ անհրաժեշտ է անելի ազդու դարձնել Արսելի ապահովական դրութիւնը, որ պետք է սենարիոն չկրկնուի յառաջիկային:

Բանակի ընդհանուր հրամանատար զօրավար Ժան Բահուաճի հեռախօսազրոյց մը ունեցաւ: Ֆրանսայի պաշտպանութեան նախարար Ժան Էլ Լոտրիանի հետ եւ քննարկեց լիբանանեան բանակին խոստացուած ռազմական օժանդակութիւնները շուտափոյթ արագելու կարելիութիւնները: Ընդհանուր անվտանգութեան ընդհանուր տնօրէն, հազարապետ Ապաս Խարահիմ յայտարարեց, թէ ահաբեկչութիւնը պատերազմ յայտարարած է Լիբանանի դէմ: Երեսփոխան Սամիր ճըսր յայտարարեց, թէ ոչ ոք կրնայ երաշխաւորել, որ զինուորները պիտի չվերադառնան Արսել եւ անոր շրջապատի գիւղերը: Ականատեսներ կը վկայեն, թէ Տաշի զինուորները քաղաքացի գզտեսներով կը շրջին Արսելի մէջ:

ՀՐԹԻՌԱՐՁԱԿՈՒՄԸ ՎԵՐԱԿԱՐՁԱՒ ԿԱԶՄՅԻ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԻ ՄԻՋԵՒ

Իսրայէլի եւ Համասի միջեւ նախապէս հաստատուած ետորեայ զինադադարը վերջ գտաւ երկ կողմէն: Չինադադարը վերջ գտած պահուն ահազանգներ հնչեցին Կազայի բոլոր շրջաններուն մէջ: Համասի պատասխանատու մը յայտարարե-




րեց, թէ պաղեստինեան հատուածները պիտի մերժեն երկարած գէտ զինադադարը, որովհետեւ Իսրայէլ կը մերժէ Կազայի շրջափակումը ջնջելու առաջարկը:

Իսրայէլեան բանակի խօսակ մը յայտնեց, թէ Կազայեան քան հրթիռ արձակուած է Աջըլի ուղղութեամբ: Վարչապետ Պեհիաբին Նեթանիահու հրահանգեց անմիջապէս հակադարձել հրթիռարձակումներուն: Իսրայէլեան հրետանին եւ օդուժը սկսան ռմբակոծել Կազայի կարգ մը շրջաններ: Պէն Կորիոն միջազգային օդանավայանը ժամանակաւորապէս դադրեցաւ ընդունելու վայրէջք կատարող օդանավներ:

Բանակցութիւններու գետնի վրայ Իսրայէլ առաջարկեց 15 գերի եւ ութ պաղեստինցիներու դիակ յանձնել Համասին, երկու իսրայէլացի զինուորներու դիակներուն փոխարէն:

ՓԵՆՏԱՐԿԱՆՆԵՐԸ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՆ ՎԵՐԱՏԻՐԱԾՆԱԿ ԿՈՐՄՈՒՄԸ ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամա, Տաշի դիրքերուն վրայ օդարշա կատարելու կանաչ լոյս տուաւ Իրաքի մէջ տեղակայուած ամերիկեան զօրքերուն: Օպամա դատապարտեց փոքրամասնութիւններու դէմ Տաշի վայրագութիւնները: Իրաքեան բանակի ընդհանուր հրամանատար զօրավար Պաքըր Չիպարի յայտարարեց, թէ փեշմարկաները չեն պարտուած եւ պիտի յաղթեն Տաշին:



Հիւսիսային Իրաքի քրտական շրջանի քրտական ուժերուն՝ փեշմարկաներուն, եւ իսլամ ծայրայեղական զինեալներուն միջեւ բռնուբռնութիւնները շարունակուեցան Ուրբաթ, 8 Օգոստոսին: Բախումներուն հետեւանցով, իսլամ ծայրայեղականները հասան քրտական շրջանային կառավարութեան մայրաքաղաք Արպիլի սահմանները: Անոնք նաեւ գրաւեցին Մուսուլի քրամաքը եւ մեծամասնութեամբ քրիստոնէայ բնակչութիւն ունեցող Զարբուշ քաղաքը՝ տասնեակ հազարաւոր քրիստոնէաներու տեղահանութեան պատճառ դառնալով:

ՀԱՎԱԳՐԵՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԷՐՏՈՂԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Թուրքիոյ վարչապետ Ռեճեպ Թայիպ Էրտողանի արտասանած՝ «ինձի համար վրացի ըսին, անելի գէշն ալ» (որոշ թարգմանութիւններով՝ «տգեղեց»), ինձի համար, կը ներքէ՛ հա՛յ եւ ըսին» նախադասութիւնը դատապարտումի ալիք մը պատճառեց:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամլոյ խօսակ Տիգրան Բալայեան ըսաւ, թէ Էրտողանի յայտարարութիւնը պատիւ չի բերեր ո՛րեւ մէկուն եւ յատկապէս պետութեան ղեկավարին: Բալայեան ըսաւ, թէ նման յայտարարութիւնները պարարտ հող կը ստեղծեն. «Տեղային հիմքի վրայ յանցագործութիւններու համար, ինչպէս էր Զրաւոյ Տիգրանի սպանութիւնը: Ռապիճի նման դրսեւորումները ինկած են ցեղասպանութիւններու իրագործման եւ անոնց ժխտողականութեան հիմքին մէջ», ըսաւ Բալայեան:

Ընտրական այսպիսի մթնոլորտի մը մէջ, երբ թեկնածուները կը ջանան շահիլ բոլորին համակրանքը, ուղղակի անսպասելի էր, որ վարչապետը հայերը վիրաւորէր այսքան ծանր հնչող արտայայտութեամբ մը, որ շատ անհանգստացուցած է հայերը: Վարչապետի ընդդիմադիրները անշուշտ առիթը պիտի չգտնու-

ՄԷՅՐԱՆ ՕՀԱՆԵԱՆ ԶԵԿՈՒՑԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԻՆ

Հայաստանի պաշտպանութեան նախարար Մէյրան Օհանեան վերջին տարւոյ օրերուն ընթացքին սահմանի վրայ ստեղծուած իրավիճակին մասին գեղեցիկ ներկայացուց՝ կառավարութեան երկուսուս նիստին: Նախարարին ելոյթը կը ներկայացնէր ամբողջութեամբ:

«Մեծարգոյ պարոն վարչապետ, յարգելի գործընկերներ, ընդհանուր առմամբ 2014 թուականը Հայաստանի, Արցախի, հայկական բանակի համար լարուած ժամանակահատուած էր: Ազրայէճանի Հանրապետութեան ռազմաքաղաքական ղեկավարութեան ռազմական հետտորաբանութեան արդիւնք էին իրադարձութիւնները, տիրեցին-հետախուզական



գործողութիւնները, սպառազինութիւնների մրցակցը, որոնք յանգեցրին նրան, որ 2014 թուականին, ի տարբերութիւն 2013 թուականի, իրադարձութիւնները չեղան իրադարձութիւններ: 18 հազար ղեկավար եղան՝ այն ղեկավար, երբ 2013 թուականին միայն ամբողջ տարուայ ընթացքում՝ 13 հազար խախտում է եղել: Հակառակորդի կողմից այս ժամանակահատուածում եղել են նաեւ 26 տիրեցին-հետախուզական գործողութիւններ կամ փորձեր, որոնց շուրջ 65 տոկոսը, այսինքն՝ 15 ղեկավար Յուլիսի 25ից մինչեւ հիմա, այս ժամանակահատուածում էր:

Լարուած իրավիճակը դեռեւս պահպանուում է: Ազրայէճանական կողմն իրականացնում է իր ծաւալներով եւ բնոյթով անսահման ռազմական բնոյթի գործողութիւններ, այդ թում՝ իրադարձութիւնները ինքնուրու խախտումներ են խաղաղ բնակավայրերի գնդակոծութիւնները մեծ տրամաչափի զինատեսակներով, տիրեցին-հետախուզական ակտիւ գործողութիւններ, ինչպէս նաեւ շփման գծում եւ թիկունքում զօրքերի տեղաշարժեր, տեղեկատուական եւ քարոզչական ակտիւ գործունէութիւն: Ինչպէս ցոյց է տալիս վերլուծութիւնը, Օգոստոսի 1ից սկսած՝ հակառակորդի կողմից իրադարձութիւնները խախտման ինքնախուզութիւնը

(Շար.ը՝ էջ 4)

ԸՍՏ ԱԼԻԵԻ ՊԱՏԵՐԱԶՍԸ ԶԷ ԱՄԱՐՏԱԾ ԱՅԼ ՄԻԱՅՆ ԱՆՈՐ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԳՐՈՒՄՆ Է ԱՅՍ

Ազրայէճանի նախագահ Իլհամ Ալիեւ «Թուրքիոյ» ընկերային ցանցի իր էջին միջոցով յայտարարութիւններ կատարած է:

Ան էջին վրայ տեղադրած է 57 արձանագրութիւն, որոնք իմասականին մէջ կը վերաբերին Ղարաբաղի հակամարտութեան: Անոնց մէջ Ալիեւ նաեւ գովաբանած է Պաքստին եւ բարձր գնահատած երկրի պաշտպանական համակարգը:

«Պատերազմը չէ ասարած, այլ միայն անոր առաջին հանգրուանն է ասիկա, իսկ երկրորդ հանգրուանը կրնայ սկսիլ», գրած է Ազրայէճանի նախագահը:

Այլ արձանագրութեամբ մը ան հայերը բարբարոսներ եւ քանակաւոր անուանած է՝ պղտորով, թէ անոնք գետնին հաւասարեցուցած են Աղտամը, իսկ իրենք կը վերականգնեն այդ քաղաքը:

Ալիեւ նաեւ գրած է, թէ իրենք ունին հզօր ռազմական ներուժ, սակայն Ազրայէճանի մեծագոյն ուժը իր զինուորներուն քաջութիւնը եւ հայրենասիրութիւնն է:

(Շար.ը՝ էջ 4)

ԳՆԵՒԻ ՎԱՐՉԱՊԵՏՈՒ ՎԱԿԱՆԵՒՈՒՄՆ ԵՐՏՈՂԱՆԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԾ ԿԱՆ ՆԱԽԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ ՇԱԽԱԳՈՐԾԵՒՈՒ ԿՐԱՊԵ՛Ս ԱՂ ԿԱՏԱԿԵԿԱՆ:

Ինչպէս հաղորդած էինք, Հանրապետական Ժողովրդային Կուսակցութեան երեսփոխան Յուրշիտ Կիւնեշ առաջիններէն էր, որ վարչապետը քննադատեց անոր հակահայ արտայայտութեան կապակցութեամբ՝ զայն խտրականութեան ամենէն ծանր տեսակը նկատելով: Ան նաեւ գործնական քայլ մը առնելով՝ դատական իշխանութիւններուն գանգատ ներկայացուց Էրտողանի դէմ:

Իր կարգին, Ազրայի Շարժում Կուսակցութեան երեսփոխանական խմբակի փոխնախագահ Օքթայ Վուրալ ըսաւ. «Էրտողանը ամենամեծ գրգռիչն է: Ժողովուրդները իրարու կը թշնամացնեն՝ անոնց ինքնութեան եւ դաւանանքին համաձայն: Աստուած մեզ պաշտպանէ այս խտրական մտայնութեան: Այս ստատուութիւնը կը թշնամացնէ թուրքը քիւրտին, իսլամը իսլամին, գազան քիւրտին, սիւնիսի ալաուիին: Կարեւորը՝ «ան, առ, ես», ընելը չէ, կարեւորը՝ «մենք» ընելն է»:

Կ'ակնկալուէր, որ հանրապետութեան նախագահութեան քիւրտ թեկնածու Սալահատին Տեմիրճաշը եւս անդրադառնար վարչապետի խօսքին: Արդարեւ, ան Ատանայի մէջ, տասնեակ հազարաւորներու ներկայութեան, հարցուց. «Մէկը, որ հայերը

(Շար.ը՝ էջ 2)

Վրինգերն ու Կրիմը

«ԱՐԵՒԻ ԱՐԱԲԵՐԷՆ ԱՄՍՕՐԵԱՅ ՅԱԻԵԼՈՒԱԾԸ»

Հայ մամուլի 220-ամեայ պատմության ընթացքում հրատարակուել են մեծ թուով բազմաթվոյթ պարբերականներ: Դրանց դերադրութան մէջ, հայալեզուների կողքին, իրենց ուրոյն տեղն ու հերթակատարութիւնը մշտապէս ունեցել են նաեւ օտարալեզու հրատարակութիւնները: Պատմական ճակատագրի բերումով օտար ափերում ծնուած նոր սերնդին հայ պահելու եւ հայեցի դաստիարակելու եւ, ամենակարեւորը՝ խորագրէր «Կրիմը»-ն:

Մեզանում, ցաւօք, դեռեւս սփիւռքահայ մամուլն ու նրա պատմութիւնը լաւ ուսումնասիրուած չեն, իսկ օտարալեզու հայ պարբերականների հետազոտուած լինելու աստիճանը շատ հեռու է բաւարար լինելուց: Եւ դա այն դէպքում, երբ փաշտուած հայատառ թուրքերէն մամուլը, մինչ օրս լոյս տեսած օտարալեզու հայ պարբերականների ու թերթերի թուաքանակը մօտենում է 300-ի ասիմանագծին: Գաղտնիք չէ, որ մինչեւ վերջին տարիների ցաւիկ դէպքերը, արաբալեզու երկրներում՝ առաւելաբար Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում եւ այլն, ապրում էին մեծ թուով սփիւռքահայեր: Արանց ստեղծել էին իրենց տարաբնոյթ կառույցները, որոնց գագիկ մասը հրատարակում էին պարբերականներ, այդ թելում՝ արաբերէն: Դրանցից առաջինը Լիբանանում ՌԱԿ-ի «Չարթոսը» օրաթերթի շաբաթական հաւելուածն էր, այնուհետեւ «Ալ Կիտա»-ն եւ այլն, որոնց պատաւար շարքը 1998 թ. Յունուարին լրացնելու եկաւ Եգիպտահայ մամուլի երկարակեաց երէցների «Արեւ»ի արաբերէն յաւելուածը^{[1]:}

Յաւելուածը կոչուած էր կարգելու հայ-Եգիպտական բարեկամութիւնը, իրենց լեզուով Եգիպտոսի ժողովրդին ծանօթացնելու հայերի հերոսական անցեալին ու ներկայ օրերում մտահոգող հիմնախնդիրներին: Եգիպտոսահայ մամուլի տարեգրութեան մէջ Եգալի համարուող այս յաւելուածի առաքելութիւնը ազգօգուտ գործ կատարելն էր, երկու ժողովուրդների միջեւ սիրոյ եւ եղբայրութեան կամուրջներ ձգելը, նրանց առաւել մերձեցնելը, հայ ժողովրդի եւ լուրսերի բոլոր ծայրերին ծանօթանալու Եգիպտացիների համար կարելիութիւն ընծայելը: Իրապէս լաւ է ասուած՝ յաւելուածը «Արեւն կը փոխադրէ այն լոյսը, որ կը յայտնաբերէ բարեկամ հայ ժողովուրդին պատմութեան իրողութիւնները, տագնապները եւ ցաւերը, ինչպէս նաեւ ապագայի վերաբերել իր յոյսերը եւ անկախութիւնները»^{[2]:} Այն կոչուած էր «Արաբ եւ Հայ ժողովուրդներու միջեւ բարեկամական կապեր ստեղծել եւ գանոնք ամրացնել, տուեալ ժողովուրդներուն ծանօթացնելով հայ ժողովուրդին ազգային ժառանգութիւնը, արեւստ, մշակոյթը, պատմութիւնը եւ մեր ժողովուրդին առանձնայատկութիւնները եւ դիմորոշ գիծերը»^{[3]:}

Միևել 2009 թ. Մայիսը յաւելուածի պատասխանատու, հայ ժողովրդի եւ յատկապէս Եգիպտոսահայերի պատմութեան մասնագետ, պատմաբանին բնորոշ աւելի շատ նկիւրթի բովանդակութեամբ, քան դրանց ճեւերով հետաքրքրուող Մոհամմետ Ռիֆաթ Էլ Իմամը, ողջ խմբագրակազմը եւ գրախօսուող գրքի հեղինակ, ազգային-հասարակական-մշակութային ասպարեզում աւելի քան հիսնամեայ գործունեութիւն ծաւալած, Եգիպտոսահայ նշանաւոր մտաւորական Պ. Թերզեանն այդ պատուաբեր առաքելութիւնը հիանալի կատարեցին, մշտապէս վայելելով Եգիպտական իշխանութիւնների եւ մտաւորականութեան բարեհաճութիւնը: Նրանց հիմնական առաքելութիւններից էր կարելիութիւն ստեղծել Եգիպտացիների լաւ «ճանչնալու հայ ժողովուրդին եւութիւնը իր տարբեր երեսակներով»^{[4]:}

Թերզեանն սփիւռքահայ այն գործիչներց է, որոնց երբեք կուսակցական չգործած, եւ առանց այդ համակարգում «Աթոռ, դիրք կամ իշխանութիւն ունենալու անկկալութեան», ներքին համոզմունքով եւ նուիրումով, բարձր գնահատելով հայութեանը զանազան արկածախնդրութիւններից հեռու պահելու «Արեւ»ի զգօն եւ շրջապայեաց մօտեցումները՝ ծառայեցին ազգին ու նրա ցաւերը դարմանելու դժուարին գործին: Նա կուսակցական «չլլալով հանդերձ», «Արեւ»ական մը եղած է, թէք կարելի է նման եզր մը գործածել, մաս կազմելով անկուսակցական այն զանգուածին, որ տասնամակներ շարունակ հաւատարմութիւն հետեւած է «Արեւ»ի որդեգրած առողջ ազգային ուղեգծին»^{[5]:}

1998-ի Յունուարից 2009-ի Ապրիլ գոյատեւած յաւելուածի անցած 11-ամեայ ուրու, դրա ընթացքում լոյս տեսած 136 համարներում պարունակող 86 Եգիպտոսահայ եւ օտար հեղինակների հրապարակումների պատմութեանն ու բովանդակութեան վերլուծութեանն է նուիրուած Պ. Թերզեանի տոյն աշխատութիւնը: Երկարագրական բնոյթ ունեցող այս ուսումնասիրութիւնը բարկացած է հայ մամուլի պատմութեան խորագիտակ ու վաստակաշատ հայրենաբնակ մտաւորական, փրեֆեսոր Ա. Խառատեանի հեղինակած Առաջաբանից, երեք զլուխներից, շահեկան Յաւելուածից եւ մի քանի գանազան գրութիւններից, որոնք «կրնան սատարել ներկայցուող հարցերուն առաւել ճիշդ եւ յստակ ընկալումին»^{[6]:}

«Ծագում» վերնագրուած առաջին զլիւում հեղինակն իրեն յատուկ մանրակրկիտ ու բարեխիղճ մօտեցմամբ ներկայացուում է այն իրադրութիւնների պատմութիւնը, որոնց արդիւնքում հայ մամուլի խորապատկերի վրայ երեսւց եօրոյիշեայ յաւելուածը: Հեղինակը իրաւացիօրէն նշում է, որ Եգիպտոսահայութեան անցած ուղին ու նրա դրական փորձը՝ որպէս երկու ժողովուրդների լիակատար համագործակցութեան վառ օրինակ, որպէս ներդրանակութեան, մեծամասնութեան թոյլատու, ճգմելու ցանկութեան իսպառ բացակայութեան եւ փոքրամասնութեան հպարտ կեցուածքի լաւագոյն դրսեւորում, արժանի են անդհամեկական ուսումնասիրութեան: Եգիպտոսահայ գաղթօջախում երկար տասնամակներ լոյս տեսած թերթերի կողքին, արաբերէն խնդրոյ առարկայ յաւելուածի երեսուկ պատմութեան ներկայացումը՝ որպէս մերօրեայ լաւագոյն իրողութիւններից, աւելի քան անհրաժեշտ էր, ինչն էլ նկիւթ խորը իմացութեամբ եւ սրտացալ կատարել է այդ գործառնոյթների բոլորովին էլ ոչ շաբաթային մասնակից հեղինակը:

Քանի որ Եգիպտոսում թերթը հրատարակելու արտօնագիր ստանալը բաւական բարդ գործընթաց է, դրա համար եւ, գիտակցելով նոր արաբալեզու թերթ լոյս ընծայելու անհրաժեշտութիւնն ու վայելելով իշխանութիւնների բարեհաճութիւնը, «Արեւ»ի հրատարակիչ մարմնի նախաձեռնութեամբ, նոր պարբերականը սկսում է լոյս տեսնել որպէս յաւելուած: Արձանագրելով կատարուածը հեղինակն անթաքոյց ուրախանում է, մասնկան անաղարտութեամբ իրճում, լաւ քան անելու գիտակցութեամբ՝ բարարարուածութեան զգացում ապրում:

Երկրորդ՝ «Ճառագայթուն» զլիւում հեղինակը ձգուում է առաւելագոյն տեղեկութիւններն ու լուսաբանութիւններ տալ

Եգիպտոսահայ մամուլի պատմութեան մէջ եգալի համարուող այս պարբերականի մասին, ներկայացնում դրա բովանդակութիւնը, քննարկուած խնդիրներն ու դրանց տրուած լուսաբանութիւնները, ինչպէս նաեւ՝ դիմակայած դժուարութիւնները:

Հեղինակը նշում է, որ 16 էջով հրատարակուող յաւելուածի առաջին համարը բացուում է պատասխանատու խմբագրի «Երկուսից Յաւելը... եւ Շտունը» խորագրից կրող խմբագրականով, որտեղ փոքրիկ պատմական էքսկուրս կատարելուց յետոյ, ներկայացում են պարբերականի գոյաժաման դրդապատճառներն ու նախանշուող ուղին: Իսկ Պ. Թերզեանի առաջին՝ «Եւ ժպտեցաւ Լուքսորը» խորագրով յօդուածը տեղ է գտնում երկրորդ համարում: Դրանով էլ սկսւում է երկու հաւասարակշռուած, կիրթ ու ձեռնարկած գործին անշահախնդիր նուիրեալների թերթային 11-ամեայ շահեկան բարեկամութիւնը: Յետագայում հասարակութեան կողմից թերթի լաւ ընդունելութիւնն ու նրա նկատմամբ օրէցօր աճող հետաքրքրութիւնը թելադրում են, որ պարբերաբար ներկայացուեն մամուլի տարբեր հրապարակումներում եղած հայկական խնդիրների վերաբերեալ հայրութեանն ու օտարների տեսակետներն ու անդադարձները:

Մէկ տասնամեակից աւելի գոյաւորման ընթացքում յաւելուածին յաջողւում է իր կայացման գործում ընդգրկել տարբեր սերնդի պատկանող ու տարբեր մասնագիտութիւնների տեղ արաբ, Եգիպտացի եւ հայ մեծաքանակ մտաւորականների, որոնց շնորհիւ «իրագործուած է յաւելուածին բազմաթիւ թովանդակութիւնը»^{[7]:}

Յաւելուածում քննարկուող առանցքային հարցերից մէկը Յեղափոխութեան խնդիրն էր: Պատահական չէ, որ աւելի քան 100 հրապարակումների մէջ արժանօճել են Հայոց եղեռնին անչուող խնդիրներ, արտայայտելով հիմնական մէկ տեսակետ. անհրաժեշտ է մշտապէս հետամուտ լինել հայերի պահանջատիրութեան իրաւունքին եւ աներկբայօրէն դատապարտել օսմանեան իշխանութիւններին: Պակաս կարելու չի համարուել այդ տեսակետներին արաբ ընթերցողին փոխանցելու գործը: Հեղինակը ցաւով արձանագրում է, որ այդ աշխատանքներն իրագործելը չափազանց բարդ խնդիր է, ինչը Եգիպտոսահայութեան մէջ վերջին տասնամակների ընթացքում «հետզհետեւ համատարած դարձող մատաւորական երաշտին եւ գաղափարական հիւժախտին»^[8] արդիւնք է:

Գրքի ամենաբաւառաւոր «Շիջում» զլուկն է, որտեղ ներկայացուում են Յաւելուածի դադարեցման համար ստեղծուած անկապատ իրավիճակն ու արհեստածին պատճառները: Մասնագետների մէջ շխորհանալով արձանագրեց, որ այդ տեսակ դրսեւորումների շտապ կարելու չէ, որովհետեւ այն սփիւռքահայ մամուլի պատմութեան անդաստանում: Դրանց արդիւնքում փակուել են տասնամեակներ շարունակ լոյս տեսնող հրաշալի պարբերականներ, հալածուել հրաշալի եւ ազգին ու իրենց գործի նուիրեալ մտաւորականներ: Յաւելուածը դադարեցնելու մասին հեղինակի այս շարադրանքը յօգուտ իր պաշտպանեալի հրաշալի, պատճառաբանուած, փաստերով հարուստ, խելացի ու գրագետ իրաւագետի փաստաբանական ելոյթ է յիշեցնում: Միայն, ցաւօք, արդարացման դատավճիռ չի ինչել եւ յաւելուածի հրատարակութիւնը չի վերականգնուել: Իսկ այդպիսի անտրոարացի ելքով դէպքեր, պատմութեան մէջ որքան ուզեք եղել են:

Ինչեւէլ յաւելուածը, որը հրաշալի պահպանելով ամօրջային յատուկ լրագրողական բոլոր նորմերը, գործում էր սփիւռքահայ մամուլին յատուկ լայնատիրութեամբ, դրսեւորելով յարգանք հիւրընկալ երկրի ու նրա ժողովրդի նկատմամբ, օրինակապաշտ եւ նուիրելով քաղաքացու կեցումածք, հանդուրժողականութիւն եւ այլախոսութիւն, դադարեց լոյս տեսնելուց: Կորուստն անկասկած մեծ էր մի շարք առումներով.

ա. Արաբալեզու հայեցի պարբերականները շատ քիչ են եղել, իսկ այդքան դժուարութեամբ ստեղծածն այդպէս անդառնալիցօրէն կորցնելը խելամիտ քայլ համարել հնարաւոր չի:

բ. Յաւելուածի միջոցով հնարաւոր էր դառնում հայ-արաբաւան հիմնախնդիրների փոխադարձ շփման եզրեր յայտնաբերել, իրանցում անկալ արդարներն ընդգծելով ցոյց տալ հայերի իրաւացի լինելն ու դաշնակից ունենալ արաբական աշխարհում, ինչը անկալ կարելու էր կրօնական հակամարտութիւններում գալարուող ներկայ աշխարհում:

գ. Յաւելուածի տարածման կանխամտածուած աշխարհագրոլքը հնարաւորութիւն էր ընձեռնում մերձաւորաբնելեան այլ արաբալեզու երկրներում եւս դաշնակիցներ գտնել, դեսպալանների միջոցով անհրաժեշտութեան դէպքում աջակցուել հնարաւորութիւնն ապահովել:

դ. Հայ մամուլի պատմութեան կտակ վրայ դադարեց առկայծել գեղեցիկ ու համեստ մի աստղիկ, իսկ դրանց կարիքը մեզ նետած մարտաիրաւերներին դիմակայելու դժուարին գործում մեր օրերում շատ է զգացում:

Է. Անտեսուել է Սփիւռքում հայ մամուլի տեղի, գործառնոյթների ու նշանակութեան հանգամանքը, ինչն անդառնալի վաստում է ընդհանուր գործին եւ, որ ամենավատագաւորն է, կարող է վարակիչ դառնալ:

Ամփոփելով նշենք, որ տոյն ուսումնասիրութիւնը բազմաէջ ու հաստափոր չէ, սակայն լուրջ խնդիրներ է բարձրացում: Առաջին հայեացքից անաչառ փաստագրողի դիրքերից Պ. Թերզեանը արձանագրում է կատարուած մի իրողութեան պատմութիւն: Սակայն զգացում է, որ նա կորստեան ցաւ ու մորմոք ունի հոգում թաքցրած, տազակալ ու անհանգստութիւն նման դրսեւորումների նկատմամբ: Դրսեւորումներ որոնք աղքատացնելով մշակութային, հոգեւոր ու կրթական ասպարեզները, վտանգում են հայապահպանութեան կարելուարագոյն գործառնոյթները են, վերջապէս, Սփիւռքի գոյութիւնն ընդհանրապէս:

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ
Պատմական գիտութիւնների թեկնածու, դոցենտ

11.07.2014 թ., Երեւան

^[1] Թերզեան Պերճ, «Արեւ»ի արաբերէն ամօրջայ յաւելուածը», *Գահիրէ, 2014, ուսումնասիրութեանն է նուիրուած մեր տոյն գրախօսութիւնը*:

^[2] Թերզեան Պերճ, «Արեւ»ի արաբերէն ամօրջայ յաւելուածը», *Գահիրէ, 2014, էջ 40*:

^[3] Նոյն տեղում, էջ 27:

^[4] Նոյն տեղում, էջ 45:

^[5] Նոյն տեղում, էջ 127:

^[6] Նոյն տեղում, էջ 18:

^[7] Նոյն տեղում, էջ 43:

^[8] Նոյն տեղում, էջ 49:

«ՎԱԿԱՉԴԵՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԷՐՏՈՂԱՆԻ...»

(Շարունակուած Ա. Էջէն)

Եւ ժողովուրդները այսպէս կը նախատէ, ինչպէս պիտի գրկէ բոլոր ժողովուրդները»: Ան ապա քսաւ, որ ինք եւ իր ընկերները այս օրին հասան՝ միշտ բոլոր ժողովուրդները գրկելով, եւ այսօր ալ ատոր պայքարը կը մղեն: Ան բոլոր հայրենակիցները իրաւիւրեց այս Կիրակի օր իրենց քուէն գործածելու՝ կրկնելով ժողովուրդներու եղբայրութեան ու միասնութեան իր պատգամը, որպէսզի իրարու հաւասար կեանք կարենան ապրիլ պալուները, եգիտները, հայերը եւ բոլոր այլ ժողովուրդները:

«Եթէ կ'ուզէք ունենալ հանրապետութեան նախագահ մը, որ բոլորը նոյն պահուն իրարու հաւասար կը տեսնէ, այն անուն ձեր քուէն տուէք մէկու մը, որ ժողովուրդներու կողքին է», քսալ Տեմիրթաշ:

Միւս կողմէ, Մուսա Էրան Վազըֆ գիւղի գիւղապետ Պերճ Գարթուն ամօթալի կեալուց Էրտողանի վիրաւորական խօսքերը՝ ըսելով, որ անուք վշտացուցած են հայկական գիւղի բնակչութիւնը: «Էրտողան դառնութիւն պատճառեց բոլոր ընտրութիւններուն իրեն աջակցող Թուրքոյ միակ հայկական գիւղի հայ բնակիչներուն», կը գրէ թրքական «Շանլուրֆա» լրատուականը:

Պերճ Գարթուն «Շանլուրֆա»ի թղթակիցին հետ գրոյցի մը ընթացքին քսալ. «Վարչապետը հայ ըլլալը գէշ բան նկատող տիւր յայտարարութիւն կատարած է: Մենք շատ վշտացած ենք: Ան վշտացուցած է նաեւ իր օգտին բուեարկողները: Դուն վարչապետն ես երկրի մը, ուր անհազին հայեր կան. ինչ է, անուք բոլորին դուն այդպիսի գէշ աչքով կը նայիս, չէ՛մ հասկնար»: Գարթունը նաեւ նշեց, որ Վազըֆի հայերը կը պատրաստուէին ընտրութիւններուն իրենց ձայնը տալու Էրտողանին: «Այլ կրօնքի պատկանող մարդիկը նսեմացնելը ամօթալի՛ բան է!», եզրափակեց գիւղապետը:

Նաեւ «Ալօս» թերթին մէջ, 17 հայերու ստորագրութեամբ հրատարակուած է բաց նամակ մը, որուն մէջ կը քննադատուի վարչապետը: Նամակագիրները, որոնց կարգին են Հայկո Պաղտատ, Արետ Տիւրք, Կարօ Փայլուն, Ռուպեր Գուրթաշ ու Արտաշէն Մարակոտեան, յիշեցուցած են, որ իրենք տասնեակ տարիներ այրած են «մենք թուրք ենք» ըսելու ստիպողութեան տակ, բայց «թուրք ենք» ըսելը տգէղ չէն գտած, այլ՝ միայն սիսալ: Անուք աւելցուցած են. «Մենք ալ ունեցած ենք ազգայնամուկներ, որոնք «թուրք մեր թշնամին է» քսած են, բայց իսկէ՛ս չըլլան նմաններ: Որքա՛ն ուրիշ ազգերու մէջ կան, նոյնքա՛ն ալ՝ մեր շարքերուն մէջ: Սակայն մենք անուք մտիկ չըրինք: Չըսինք, որ անուք են մեր ներկայացուցիչները: Հայը, որ շարողուած է իր սեփական հողին վրայ, կ'ապրի իրեն Սփիւռք՝ փոքրանալով էլ ձուլուելով: Վերջ տուր մեզ ձկան կարթին կապելու: Գործի՛դ նայ: Գործի՛դ նայէ, մինչեւ որ տեսնեն, թէ հայերու, յոյներու, ասորիներու, թուրքերու, քիւրտերու, չերեզներու, վրացիներու, պալուխներու, քրիստոնեաներու, իրեններու, իսլամներու, քեզ ձայն տուող կամ չտուող մեր եղբայրներուն հետ օր մը քեզմէ աւելի՛ լաւ կը ստեղծենք»:

Անջատաբար, պատասխանելով թրքական «Ճումուրիլթ» թերթի հարցումին՝ պոլսահայ լրագրող Հայկո Պաղտատ շէշտած է, թէ բոլորովին հաճելի չէ, երբ վարչապետը ազգային փոքրամասնութիւններու մասին խօսելու ընթացքին կ'օգտագործէ «գէշ» կամ «տգէղ» բառերը: «Վարչապետը պետք է հայերէն, պալուխերէն, զազաներէն եւ վրացիերէն ներողութիւն խնդրէ: Այս է իրական խաղաղութիւնը, ա՛յս է իրական ցաւակցական ուղեղձը», քսած է աւա:

ՊԱՐՃԵ ԿԸ ՓՈՐՁԷ ԱՐԿԱՐԱՅՆԵԼ

Իշխող կուսակցութեան գործօն անդամներն՝ Երուովութեան մօտ Թուրքոյի նախկին ներկայացուցիչ Էկեմէն Պաղըշ, հանդիպում մը ունեցաւ հայ համայնքէն քանի մը կարկառուն դեմքերու հետ եւ իր տեսակետները քարոզեց վերջին անցուրդածներուն մասնաւոր վարչապետին խնդրալարոյ արտայայտութեան մասին: Հանդիպման ներկայ գտնուեցան Ս. Փրկիչ հիւանդանոցի հոգաբարձուութեան առեւապետ Պերոյոս Շիրինօղլու, «Գարակեօզեան»ի խնամակալութեան առեւապետ Տիգրան Կիւլմեզկիլ, Օրթագիւղի խորհուրդի առեւապետ Իսքենտեր Շալիսողլու, «Մեւ» հմինարկէ Հայկ Ալայնեան, Պալուի թաղային խորհուրդի առեւապետ Լեւոն Շառեան, Ֆերիզիւր թաղային խորհուրդի Ա. առեւապետ Որդիք Փափագեան եւ ուրիշներ:

Պաղըշ թուեց, թէ վարչապետ Էրտողանի պաշտօնակարութեան շրջանին ինչ դրական քայիք տուած են հայերու եւ այլ փոքրամասնութեանց համար: «Աղթամարի եկեղեցին դարձեալ արարողութեան ձայն բարձրացաւ: Այս պետութիւնը 2 միլիոն տուրօ արժողութեամբ կալուած վերանորոնուց փոքրամասնութիւններուն», կրկնեց աւա:

Պաղըշ ցաւ յայտնեց, որ վարչապետին արտասանած նախադատութիւնը կը խեղաթուրուի ու սիսալ կը հասկցուի: Ան քանաց բացատրել, թէ վարչապետին կողմէ «ամենէն գէշը» որակումը հայերու մասին չէր, այլ իրեն թշնամութիւն ընողներու հասցէին գործածուած որակում էր: «Իրականութեան մէջ, վարչապետը շատ լաւ կը ճանչնայ հայերը ու կը սիրէ զանոնք», քսալ Պաղըշ եւ նշեց, որ վարչապետը գիտէ, թէ հայ համայնքը միշտ կանգնեցաւ անոր կողքին:

Պաղըշ ապա պատասխանեց ուղղուած զանազան հարցումներու:

Պերոյոս Շիրինօղլու քսալ, որ անցեալին ուրիշներ եւս հայերու դէմ նախատական յայտարարութիւններ կատարած են,

ՄՇԱԿՈՒՌԱՅԻՆ ՊՐԻՍՄԱԿ

«ՆԻՈՒ ԵՈՐՔ ԹԱՅՄԸ» Կ՛ԱՆԴՐԱԴՂԱՌՆԱՑ ԱՐԵՆԻ ԱՂՊԱՊԵԱՆԻ ՁԱՅՆԱՊՆԱԿԻՆ

«Նիու Եորք Թայմզ» անդրադարձած է գալիֆորնիաբնակ Արենի Աղպապեանի վերջերս հրատարակված անդրախոսած ձայնագրերին՝ «Զիսի (Պեկ)»-ին («Kissy (Bag)»), որ տրամադրվել է անոթ «arenismiles.com» կայքին:

Իր իւրայատուկ բիւրեղային ձայնով ծանօթ Արենի Աղպապեանը, որ մինչև այս երգապահանջները հրատարակված աշխատակցած է գաղապան այլ արուեստագետներու հետ, ներառելով՝ Տիգրան Յանսեանի, «Զիսի (Պեկ)»-ին մէջ իր ձայնի միացուցած է ևս երկու անգամ դաշնակի մեղեդիները:



«Այսօր խիստ կեդրոնացած եւ քնարերգական պարզ պատկերներով եւ պատմութիւններով դժուար ծածուկ ճշմարտութեանց յառաջացող արուեստագետի մը ստեղծագործութիւնն է», գրած է «Նիու Եորք Թայմզ»-ը:

ՎՐԵԾ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԳՐՈՂԻ ԶՍՊՈՒՄՐՈՒԾ ՈՒԾԸ

Յունիսի 20ին Յակոբ Պարոնեանի անուան երաժշտական գոմէտիայի պետական թատրոնում կայացաւ Վրեժ Իսրայէլեանի «Վաղ Թէ Ուշ» գրքի շնորհանդէսը (1 տարի առաջ գրողը հրաժեշտ տուեց երկրային կեանքին): Ընդհանրապէս արարողութեանը ներկայ էին հանրապետութեան Նախագահ Սերժ Սարգսեանը,



պաշտպանութեան Նախարար Սեյրան Օհանեանը, բարձրաստիճան այլ պաշտօնականներ, գրողի մտերիմները, հարիւրաւոր ընթերցողներ:

Գիրքը տպագրուել է պետական աջակցութեամբ, 500 օրինակով: Գրքում գեղարուած է հեղինակի խօսքը՝ ուղղուած ընթերցողին: Նա գրում է. «Յայ ծնունդով համար Աստուծոյ շնորհակալութիւն չեմ յայտնել, ոչ էլ փնտել եմ իմ ճակատագիրը: Ապրել եմ ինձ տրուածով՝ թէ ուժերս ներածին չափ փախչելով ազգային խնդրութիւնից: Լարեցապէս ու «Սասունցի Դաւիթ» Էպոսը աշխարհի աչքը խորթուց առաջ փորձել եմ ինքս լցուել նրանցով: Երեւի ուժս չի պատել: Չէ, դա անգործութիւնն է, որիչ բան է: Ո՞րն է ուժը, այն, որ գործարարում է, թէ այն, որ գալուս է: Կարծում եմ՝ գրականութիւնը բաների մէջ գալուած ուժն է: Հակառակը աղէտն է»:

Այսպէս էր մտածում, այսպէս էր ապրում, այսպիսին էր Վրեժ Իսրայէլեան մարդը, հայի սասունցի տեսանքը, առանց որի, ինչպէս ինքն էր ասում, աշխարհը տխուր կը լինի: Եւ իրօք. մեր աշխարհը առանց սասունցի Վրեժ Իսրայէլեանի տխուր է: Տխրութիւն, թախիծ, ափսոսանք, բայց եւ վիճաբար յետադիմական հումոր, ժպիտ եւ անեղ ջերմութիւն: Այսպիսին էր ամառային երեկոն Յակոբ Պարոնեանի անուան երաժշտական գոմէտիայի պետական թատրոնում:

«Վաղ Թէ Ուշ» գրքի շնորհանդէսի արարողութեանը յաջորդեց Վրեժ Իսրայէլեանի յիշատակին նուիրուած յուշ-երեկոն: Երեկոյի ընթացքում մնջախաղի ուղեկցութեամբ հիւրերի ուշադրութեանը ներկայացուցին հատուածներ հեղինակի նոր հրատարակուած «Վաղ Թէ Ուշ» գրքից (ընթերցում էր դերասան Դաւիթ Յակոբեանը), որոնք մերթընդմերթ ուղեկցուած էին հայ անուանի երգիչ-երգչուհիների կատարումներով:

Վրեժ Իսրայէլեանի աշխատել է «Յայրենիքի Ձայն» շաբաթաթերթում, «Սովետական Հայաստան» ամսագրում, «Գարուն» ամսագրում, տպագրուել է ևս երկու այլ արբերականներում: 1993-99ին եղել է ՀՀ ՊՆ «Հայ Զինուոր» պաշտօնաթերթի խմբագիրը, 1999-2009թթ. ղեկավարել է ՊՆ լրատուութեան եւ քարոզչութեան վարչութիւնը: Հեղինակել է Արցախեան պատերազմի նուիրուած վաերագրական կինոսցենարներ («Մահից Առաջ է Յետոյ»), «Երկրպագիւ թաղաքականութիւնը», «Այսպէս Դարձանք Երկրպագի», «Մահապարտներ», «Զայր», «Առաջին Գիծ», «Անդրանիկ» եւ այլն): Ստեղծագործութիւնները թարգմանուել են ռուսերէն, անգլերէն, վրացերէն, արաբերէն, ուրբաերէն եւ այլ լեզուներով: «Տօնապետ» գրքի համար 2010ին արժանացել է ՀՀ ՊՆ Դերեկոյի Դերմիրեանի անուան մրցանակի:

Ստեղծած բազմաթիւ կերպարներից գրողին ամենահոգեհարազատը Տօնապետն էր:

Ներկայացրեց՝ ԱՐՄԻՆԵ ԳՈՐԱՏԵՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶՈՐՈՑ ՅԱՍՏԻԿ ՊՂՊԵԱՆԻ ՀԵՏ «ԱՅՍՏԵՂ ԸԱՏ ԽՈՐԸ ԲՆՈՎ ԲՆԱՏ ԵՆ ՈՒ ԸԱՏ ԴԱՆԴԱՂ Է»

Աշխարհահռչակ օպերային երգչուհի, աշխարհի լավագոյն սովորակներից մէկը՝ Յասնիկ Պապեանը, ով երգել է այնպիսի հեղինակաւոր բեմերում, ինչպիսիք են Մետրոպոլիթեն օփերան, Պարնակի Զոլը, Ֆիլիպի օփերան եւ այլն, «Tert.am»-ի հետ զրոյցում արձանագրեց, որ Հայաստանում ժամանակը մի տեսակ շատ դանդաղ հունով է ընթանում:

«Այստեղ շատ խորը ընով քնած են: Դանդաղ են շարժում, դանդաղ են մտածում... կամ ուղղակի այդ ջիւղը չկայ: Որ, այ, որոշեցիք ու արեցիք... դէ լաւ, վաղը... կամ՝ չգիտեմ: Ու այդպէս օր եւ մթնշաղկում մենք Հայաստանում: Ու առհասարակ, բոլոր ասպարեզներում: Ես նկատում եմ, որ եթէ մէկն այս բաժակը պիտի վերցնի, դիմ աւստեղից այնտեղ... վայ, գիտես, չգիտեմ ինչ էլ այլն, այն դեպքում, երբ անելի հեշտ է՝ վերցնել դնել, քան կէս ժամ խօսել դրա մասին: Ծառ դանդաղ է այստեղ», նշեց երգչուհին:

ՀԱՐՑ.- Տիկին Պապեան, այս ընթացքում բաներ կատարուեցին՝ Օփերային ազգային ակադեմիական թատրոնի տնօրէն փոխուեց, եւ ըստ մեկնաբանութիւնների՝ պատահական մարդիկ յայտնուեցին օպերայում:

ՅԱՍՏԻԿ ՊՂՊԵԱՆ.- Ես հեռու եմ, բոլորովին չգիտեմ ու՞ր է ես, ուղղակի այդ մարդկանց հետ առնչութիւն չեմ ունեցել: Լսել եմ, այո, որ մրցոյթ է յայտարարուել, ընտրուել է ինչ որ մէկը...:

ՀԱՐՑ.- Մինչ այդ խօսում էր օփերայի առողջացման ծրագրի մասին, եւ Բարսեղ Թումանեանն էր մասնակցում եւ դրանից յետոյ, ի դէպ, գնաց Դազախստան:

ՅԱՍՏԻԿ ՊՂՊԵԱՆ.- Դազախստան գնաց, դրանից պէտք չէ ինչ որ ուրեղութիւն սարքել. կարող էր անելի շուտ գնալ, կամ եթէ գնաց, կ'երգի, յետոյ ետ կը վերադառնայ: Ի հարկէ, լաւ կը լինէր, եթէ Բարսեղն ընդգրկուած լինէր ղեկավարութեան մէջ, կարողանար իր գիտելիքները եւ փորձը փոխանցել, բայց ես չգիտեմ՝ ո՞վ է հիմա տնօրէնը: Ի դէպ, ծանօթացանք, ինքը եկել էր իմ համերգին, եւ պէտք է ասեմ, որ վերջին անգամ չեմ յիշում՝ ե՞րբ է մեր օփերայի որեւէ տնօրէն ներկայ եղել Ֆիլիպսոնիցի համերգին:

ՀԱՐՑ.- Նման վերաբերումը, այսինքն:

ՅԱՍՏԻԿ ՊՂՊԵԱՆ.- Այո, յամենայն դեպս, հետաքրքրուել էր մարդը եւ եկել էր: Եւ պէտք է ասեմ, որ սա արդէն շատ ուրախալի է:

ՀԱՐՑ.- Այսուհանդերձ օփերան, ըստ ձեզ, չունի՞ ֆինանսական խնդիրներ լուծելու...:

ՅԱՍՏԻԿ ՊՂՊԵԱՆ.- Ֆինանսների հետ կապուած, այո, դրանք շատ կարեւոր են...: Բայց նախ սկսենք նրանից, թէ մեզ որքանով է անհրաժեշտ օփերային թատրոն որպէս երկիր, որպէս ազգ մենք որոշել ենք, որ պիտի ունենանք օփերային թատրոն: Եթէ մենք որոշել ենք, որ պիտի ունենանք օփերային թատրոն, ուրեմն պիտի ունենանք լավագոյնը, որովհետեւ օփերային թատրոնը երկրի դէմքն է, այդ թատրոնով կարելի է որոշել այդ ազգի մակարդակը, ձգտումները, այս ազգի արժանապատուութիւնը եւ այլն, եւ այլն: Եթէ մենք ուզում ենք ունենալ օփերային թատրոն, իսկ մենք կարող ենք, եւ դա կարող է լինել տարածաշրջանի լավագոյն թատրոններից մէկը, որովհետեւ ունենք այդ փորձեցիակը՝ հրաշալի երգիչներ, երաժիշտներ, շատ լաւ հանդիսատես: Նաեւ՝ երիտասարդներ, որոնք ուժեղով թատրոնը կարող է ոտքի կանգնել: Եթէ դա մենք ուզում ենք, եթէ մեզ պէտք է, ուրեմն պէտք է անենք: Ասում եք՝ ֆինանսական... կարելի է նաեւ անել սուղ միջոցներով գեղեցիկ ներկայացումներ, համերգային կատարումներ, ինչպէս որ դա անում են աշխարհի շատ երկրներում: Դրան չունեն, բայց ցանկութիւն ունեն, ինչն ինձ համար շատ կարեւոր է:

ՀԱՐՑ.- Ձեզ համար այդ երկու հարցերի պատասխանը գտե՞լ էք, որ մեզ պէտք է օփերային թատրոն, այսինքն՝ դուք ձեզ համար ունեք, բայց իշխանութիւնը, պետութիւնը ունեն՞ այդ ցանկութիւնը:

ՅԱՍՏԻԿ ՊՂՊԵԱՆ.- Ինձ թւում է՝ իշխանութիւնը եւ պետութիւնը, այսինքն՝ այն մարդիկ, որ կարող են, ունեն այդ լծակները, այդքան լուրջ չեն վերաբերում այդ հարցին: Կամ հնարաւոր է, որ շատ անելի ուրիշ խնդիրներ ունեն, անելի կարելու: Իրենց կարծիքով՝ անելի կարելու: Բայց ինձ թւում է, որ որպէս մշակութային քաղաքակրթութիւն, այսինքն՝ զարգացման ծրագրերի, նաեւ՝ ապագայ սերունդի ու ինչու չէ, համաշխարհային մշակութային զարգացմանը համաքայլ գնալու համար սա շատ կարեւոր խնդիր է: Ինձ թւում է, որ իրենք այդքան էլ լուրջ չեն ընդունում՝ կամ ժամանակ չունեն, կամ դա պարզապէս իրենց ուժերից միգուց վեր է:

ՀԱՐՑ.- Իսկ այդ ծայրերը Հայաստանում կա՞ն:

ՅԱՍՏԻԿ ՊՂՊԵԱՆ.- Հայաստանում կան բոլոր տեսակի ծայրերը եւ մենակարծանալիս, որ տղամարդկանց շատ լաւ ծայրեր կան, որոնք հիմա ողջ աշխարհում փնտռուած են: Եւ գիտե՞ք ինձ համար շատ յուզիչ է, որ երիտասարդները, ովքեր կարող են ուրիշ գործերով զբաղուել, անելի եկամտաբեր, իրենց կենքեկն ապահովող մասնագիտութիւններ ընտրել, յանկարծ զննել եւ ընտրում են ընտրում են սոսնա-գիտութիւնը՝ շատ լաւ իմաստով, որ յետոյ հնարաւորութիւն չեն ունենալու ինքնահաստատուելու կամ կայանալու: Բայց միեւնոյն է՝ երգելու են: Երգելու են իմաստով հիւանդութիւն եւ, եթէ վարակուել են այդ հիւանդութեամբ: Բայց ինձ թւում է, որ պէտք է մտածել նաեւ այդ երիտասարդների մասին:

ՀԱՐՑ.- Իսկ երիտասարդ ծայրերի իրացնելու քաղաքակիրթ ճանապարհը ո՞րն է: Ինչպէ՞ս են փնտռում, գտնում այդ մարդիկ, յայտնում միջազգային մասնագետների ուշադրութեան ներքոյ, որպէսզի յետոյ իրենք էլ կարողանան յայտնի բեմերում ներկայանալ:

ՅԱՍՏԻԿ ՊՂՊԵԱՆ.- Մենք ունենք շատ հայ երգիչներ, որոնք հիմա դուրս երգում են, փորձում են, կարողանում են...: Գիտեք, կայանալու, օփերայում երգելու համար պէտք է կարողանալ ամբողջական նկարագիր ունենալ: Այսինքն, դու պէտք է կարողանաս լաւ երգել, ունենաս շատ լաւ ձայն, ցանկալի՝ գեղեցիկ արտաքին, բեմական տաղանդ, որը շատ կարեւոր է այսօր, իմաստ լեզուներ, ունենաս շատ մեծ կարգապահութիւն: Պէտք է կարողանաս դիմակայել, շատ արագ սովորես իրենց ներկայացրած ծրագիրը: Իսկ հիմա, փառք Աստուծոյ, ճանապարհները բաց են, կարող են ուղարկել փոքրիկ ծայրագրութիւն, իրենց տունալները, լուսանկար եւ գնալ, պայմանաւորուել: Այդպէս կարող են ունենալ պայմանագրեր: Իսկ երբ ես էի սկսում, այդ ժամանակ մենք Սովետական Միութեան կազմում էինք, եւ Ռուսաստանն ամենամեծ պետութիւնն էր, ամեն ինչ քոտաւորուած էր. եթէ մի փոքրիկ տեղ մտնում էր, դա տալիս էին Հայաստանին, Կրասնային, այսինքն՝ մենք ռուսկի ունկնդրումներ էինք անցնում: Անթիւ, անհամար ունկնդրումների եմ գնացել: Այսինքն՝ գնում եւ ծեծում եմ այդ ունկնդր, եւ տասից մէկը բացում է: Մի մտածեք, թէ գերմանացի, ֆրանսիացի երգիչները չունեն այդ խնդիրը, նրանք էլ աշխատում են ռեստորաններում, գումար են հաւաքում, այնուհետեւ իրենց հաշուին գնում են ունկնդրման, մրցոյթների, ոչ մի տեղ չեն շահում, սակայն դա շուրջ չի ընկնում, քանի որ փորձառութիւն են ձեռք բերում:

ՀԱՐՑ.- Իսկ ներկայացումների մասին ի՞նչ կ'ասեք, կ'ուզենայի՞ք անելի քարոզչութիւն, նոր շունչ, խաղացանկը հնացած չէ՞: Եւ ի՞նչ բեմադրութիւններ կ'ուզենայիք տեսնել:

ՅԱՍՏԻԿ ՊՂՊԵԱՆ.- Կ'ուզենայի տեսնել անելի շատ դասական հեղինակների, իմա մենք օփերայի խաղացանկում չունենք Սոցարոյի որեւէ ներկայացում, առանց Սոցարոյի թատրոնը հնարաւոր չէ

պատկերացնել, չունենք Տոկիոյի, Պեյ Գանթօ, չկայ Չայնոյսի, Վերտի...: Ունենք կարծեմ մէկ ներկայացում ռուսական՝ Ռախմանինովի «Ալեքօ» օփերան: Ընդհանրապէս, տարուայ մէջ ևս ազգայնը 6 նոր ներկայացում պէտք է բեմադրուի: Ֆիլիպսում օրինակ, 15 նոր ներկայացում լինում ամեն տարի: Չնայած չենք կարող Ֆիլիպիի հետ համեմատուել, բայց գոնէ 4-6 ներկայացում պիտի ունենանք: Այս ձեռով է հնարաւոր է հանդիսատես բերել դալի՞ն:

ՀԱՐՑ.- Բայց դա իրատեսական էք համարում:
ՅԱՍՏԻԿ ՊՂՊԵԱՆ.- Ես տրից եմ ասում՝ մենք պէտք է որոշենք՝ օփերային թատրոնը որքանով է մեզ համար կարեւոր:



ՀԱՐՑ.- Ձեր հայաստանեան ծրագրերի ու մտայնացումների մասին ի՞նչ կարող էք ասել:

ՅԱՍՏԻԿ ՊՂՊԵԱՆ.- Արդէն 25 տարի է՝ դուրս եմ եւ երգել եմ միշտ առանց նախօրոք համաձայնեցնելու: Առաջներում նոյնիսկ միշտ համերգները լինում էին այնպէս, որ եթէ ես Երեւանի սրճարաններում նստած էի լինում, անցնում էին ու՝ «աա, Երեւանում ես, ուրեմն, արի, մի բան երգի»: Եւ ես երբեք չեմ մերժել, սիրով համաձայնել եմ, երգում եմ 45 դերերգեր եւ դրանից 15ը գոնէ կարելի էր երգել Երեւանում: Բայց տրից եմ կրկնում՝ այստեղ շատ խորը ընով քնած են: Դանդաղ են շարժում, դանդաղ են մտածում... կամ ուղղակի այդ ջիւղը չկայ: Որ այ որոշեցիք ու արեցիք... դէ լաւ, վաղը... կամ՝ չգիտեմ: Ու այդպէս օր եւ մթնշաղկում մենք Հայաստանում: Ու առհասարակ, բոլոր ասպարեզներում: Ես նկատում եմ, որ եթէ մէկն այս բաժակը պիտի վերցնի, դիմ աւստեղից այնտեղ վայ, գիտես, չգիտեմ ինչ, այն դեպքում, երբ անելի հեշտ է վերցնել, դնել, քան կէս ժամ խօսել դրա մասին: Ծառ դանդաղ է այստեղ: Օրինակ՝ առաւօտեան աշխատանքի գնալուց առաջ կանայք անպայման վարսավիճակը պէտք է գնան, մազերը յարդարեն, անպայման պիտի երունակները ներկան լինեն, յետոյ նոր գնան աշխատանքի: Բայց չէ՞ որ շատ պարտադիր չէ, որ անպայման այդ օրը մազերդ շատ լաւ յարդարես, կարեւորը, որ գնաս, գործը լաւ անես: Եւ յետոյ օրը դանդաղ է կետոյ:

ՀԱՐՑ.- Այսինքն ըստ ձեզ կայ մասների արանցով վերաբերումը գործի նկատմամբ:

ՅԱՍՏԻԿ ՊՂՊԵԱՆ.- Այո, եւ կարծում եմ՝ փորձեփոխակցով պակաս կայ: Եւ, կրկնում եմ, դանդաղաշարժ են:

ՀԱՐՑ.- Իսկ օպերայի պատճառներ չ'էք տեսնում, որ ի վերջոյ 25 տարի շարունակ մարդիկ Հայաստանում լաւ չեն ապրել, եւ հիմա էլ վարդայ օրուայ հետ կապուած յոյսեր չունեն մի կողմից եւ միւս կողմից կարծես պատմութիւնը կրկնում է՝ սահմանին կրակում են անընդհատ: Առհասարակ, Հայաստանը ծանր ժամանակների է ապրում:

ՅԱՍՏԻԿ ՊՂՊԵԱՆ.- Այո, դա կայ: Բայց այն էլ կայ, որ սահմանին գիւտուրը գոհուում է, բայց այդ նոյն «Ֆեյսբուքում» մարդիկ կան, որ անընդհատ իրենց լուսանկարն են փոխում: Մեկն էլ ասում է՝ «շատ սքեշտայ ես կամ՝ ինչ գեղեցիկ ես»: Կամ՝ սահմանին գիւտուրը գոհուում է, բայց այդ նոյն հարսանիքները՝ նոյն ճոխութեամբ շարունակուում են: Դա մեծ հաշուով կապ չունի, բայց, ի հարկէ, այդ միտումը կայ: Բայց կան նաեւ շատ ան երիտասարդ լրագրողներ, որոնք պայմանաւորում են, ժամանակակի զախիս են, արագ են: Այսինքն՝ դա իմ ցանկութիւնն է, որ լինեն արագ: Աստորայում առաւօտեան ժամը 7ին կարող են քեզ զանգահարել ինչ որ մի հիմնարկից:

ՀԱՐՑ.- Ես, ի դէպ, երբեմն ժամը 9:30ին զանգահարում եմ անգամ աշխատող մարդկանց՝ մամուլի հասանկների, որոնք դժգոհում են, թէ ինչո՞ւ եմ 9:30ին զանգահարել:

ՅԱՍՏԻԿ ՊՂՊԵԱՆ.- Ծամբորդում են, սովորում են, տեսնում են, հիմա լաւ բաներ էլ շատ կան: Օրինակ՝ այդ կանաչ լոյսի տակ կանգնելը, որ ամառ չկար:

ՀԱՐՑ.- Երեւան գալուց ի՞նչ զգացողութիւններ ունեք, եւ ի՞նչը ձեզ ամենից շատ դուր չի գալիս:

ՅԱՍՏԻԿ ՊՂՊԵԱՆ.- Ես որպէս երեւանցի եմ այստեղ գալիս, մենք մեր տունն էլ ենք պահել: Ամենաշատը դուր չի գալիս, որ կանաչ տարածքները քիչ են, օդն իսկապէս չի հեղիքում, մերենաները շատ են: Ինձ շատ ստահուգում են բարկացումն է մայրերի բացառութիւնը: Ամեն մէկը իր դռան առաջ սեփականացրել եւ աստիճաններ է կառուցել: Ինձ ուղղակի վիրաւորում են մեր խանութների ցուցափեղկերի անունները: Ոչ մի հայկական անուն չկայ, բոլորը անգլերենից տգետ ձեւով հայերէն թարգմանուած, եւ դա մեր քաղաքի ամենամեծ թշուարն է: Դրսից եկող զբօսաշրջիկը ի՞նչ պատկերացում կը կազմի մեր քաղաքի մասին: Ինչ է, եթէ հայկական անուն լինի, դա անպատուաբէ՞ր կը լինի: Ինչ կապ ունեն «Lunch Times» կամ «Number One»-ը մեզ տեւ, սուսկալի եւ սահման չունեցող գաւառամտութիւնն է: Դա պարզապէս պէտք է արգելել, պէտք է արգելել նաեւ երեխաներին օտար անուններ դնելը: (Ընշտադրումը մեր կողմէ, «2»):

ՀԱՐՑ.- Հայկական հեռուստապիլիքներ նայո՞ւմ էք, ի՞նչ կ'սպասելուք ինչո՞ւ երաժշտութեան մասին:

ՅԱՍՏԻԿ ՊՂՊԵԱՆ.- Առաջին ալիքի ծրագրերում առաջիադացում կայ: Եթէ միացնէք Իտալիայի կամ Ֆրանսիայի հեռուստաընկերութիւնները, ամբողջ արդ է, ամենուրեք կայ այդ արդը: Ի հարկէ, ինձ համար շատ ցաւալի է, որ օդանաւակայանից դուրս եմ գալիս, պաստառի մի երիտասարդի պատկերն եմ տեսնում, տակը գրուած է «Բայա»: Վեց ամիս յետոյ կրկին գալիս եմ, նոյն երիտասարդի նկարն է, տակը գրած օրինակ՝ «Օլեա»: Ինձ այդպիսի երգերի բառերն են շատ վիրաւորում: Սակայն դա կոմերցիոն նշանակութիւն ունի, եւ մենք պէտք է հասնենք նրան, որ մարդը զայ այնպիսի ինքնագիտակ

ԳՈՅԺ

Թեքեան Մշակութային Միության Հիմնադիրներու Մարմինը սրտի խոր կսկիծով կը գուժե մահը բազմավաստակ կրթական մշակ եւ Կահան Թեքեան վարժարանի բազմամեայ տնօրէն Ազգային գործիչ՝

ՏԻՐԱՐ ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆԻ

որ պատահեցաւ Չորեքշաբթի, 6 Օգոստոս 2014-ին, Լոս Անճելէսի մէջ, Միացեալ Նահանգներ:

ԳՈՅԺ

Կահան Թեքեան Միջնակարգ Վարժարանի Հոգաբարձուները, Տնօրէնութիւնը եւ ուսուցչական կազմը ի խորոց սրտի կը գուժեն մահը վարժարանիս նախկին երկարամեայ վաստակաւոր Տնօրէն

ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆԻ

որ պատահեցաւ Չորեքշաբթի, 6 Օգոստոս 2014-ին, Լոս Անճելէսի մէջ, Միացեալ Նահանգներ:

Մարգական

ՇԱԲԱԹԱՎԵՐՋԻՆ ԵՐՈՒՊԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳԾՈՎ ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Այսօր՝ Շաբաթ եւ վաղը՝ Կիրակի պիտի բացուի Երոպական երկիրներու 2014-15 մարգական տարեշրջանի ֆուտբոլի ախոյեանութեան մրցումներուն վարագոյրը:

Ստորեւ, մեր ընթացիկներուն կը ներկայացնենք Ֆրանսայի եւ Հոլանտայի առաջին օրուան մրցումներուն յայտագիրը:

ՇԱԲԱԹ, 9 ՕԳՈՍՏՈՍ 2014

ՖՐԱՆՍԱ - ԼԻԿ 1	
Պասթիա - Մարսել	ժամը՝ 22.00
Կենկան - Սէն Թիէրի	ժամը՝ 22.00
Մոնպելիէ - Պորտո	ժամը՝ 22.00
Նանթ - Լանս	ժամը՝ 22.00
Նիս - Թուլուզ	ժամը՝ 22.00
ՀՈԼԱՆԴԱ - ԷՐԵՏԵԽԻՉ	
Գամպուր - Էֆ.Սէ. Թուներթ	ժամը՝ 20.45
Յերաքլէս - Ալքմաար	ժամը՝ 21.45

ԿԻՐԱԿԻ, 10 ՕԳՈՍՏՈՍ 2014

ԱՆԳԼԻԱ

«Չեմբիթ Կիթ» ԲԱԺԱԿ

Արսենալ ընդդէմ Մանչեսթըր Սիթի
 ժամը՝ 17.00 || **ՖՐԱՆՍԱ - ԼԻԿ 1** | |
Լիոն - Ռէն	ժամը՝ 18.00
Մոնպէր - Լորիան	ժամը՝ 22.00
ՀՈԼԱՆԴԱ - ԷՐԵՏԵՎԻՉ	
Տէն Հաակ - Ֆէյնուրտ	ժամը՝ 13.30
Այաքս - Վիթէս Արսելս	ժամը՝ 15.30
Վիլիմ 2 - Փի.Ես.Վի. Այնտհովէն	ժամը՝ 17.45

Բանի Տե Կորոյով

- 35 անձեր մահացան եւ աւելի քան 15 հազար բնակարաններ քանդուեցան Հնդկաստանի մէջ՝ պատահած ջրհեղեղին հետեւանքով:

- Տաշ կը փորձէ Ռաքայի օդակայանը գրաւել:

- «Ֆայնենշըլ Թայմզ»։ Մեուտական Արաբիա ոչ միայն Նաւթ կ'արտադրէ, այլ ճիւղատակասներ:

- Ռասմուսեն՝ ՆԱՏՕ երբեք չի մշակեր Ուքրանիոյ մէջ ռազմախարխիս ստեղծելու ծրագիր:

- «Տը Ուաշինկթըն Փոսթ»։ Հայերու մասին Երտողանի խօսքերը չափազանց անխիտ են:

ԱՅՍՕՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ 9 ՕԳՈՍՏՈՍ

* Ն.Ք. 48՝ Յուլիոս Կեսար պարտութեան մատուց Պոմպէոսի գործը:

* 378՝ Վիսիգոթները Ատրիանփոլի մէջ ծանր պարտութեան մատուցեցին Հռոմէական կայսրութիւնը:

* 1483՝ Վատիկանի մէջ լուսաւորուեցաւ Միքսթիկեան մատուցը:

* 1919՝ մահացաւ գերմանացի բնագետ եւ իմաստասեր Էռնէստ Յեյկելը:

* 1945՝ Միացեալ Նահանգներ աթոմական ռումբ նետեց ճափոնական Նակասաքի քաղաքին վրայ:

* 1963՝ ծնաւ ամերիկացի երգչուհի Ուիթնի Հիւթթընը (մահացաւ՝ 2012):

* 1965՝ Սինկափուր անշատուեցաւ Մալեզիայէն եւ հռչակեց իր անկախութիւնը:

* 1974՝ ԱՄՆ-ի նախագահ Ռիչըրտ Նիքսըն հրաժարեցաւ:

* 1975՝ մահացաւ ծագումով ռուս յորիսող Տիմոթի Շուքաթովիչը (ծնեալ՝ 1906):

ՎԱՐՉՈՒ ՅՂՐԿԱԲԱԺԻՆ

Մըզիերի շրջանին մէջ, վարձու է 200 մեթր քառակուսի տարածութեամբ (Ա. յարկ) կահաւորուած յարկաբաժին մը՝ կառատուն, երեք ննջարան, երեք բաղնիք, ստասենեակ, հիւրանոց, ճաշարան եւ խոհանոց:

Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել՝ 03- 353386 թիւին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՕԳՈՍՏՈՍ 6 - 7 ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԿՈՂՄԷ ՀՐԱԴԱՊԱՐԸ ԽԱՄՏԱԾ Է 39 ԱՆԳԱՄ

Օգոստոս 6-ին եւ 7-ին ազրպէյճանական կողմը շարունակած է խախտել հրադադարը, հայ-ազրպէյճանական պետական սահմանագոտիի տարբեր հատուածներու մէջ՝ կիրառելով հրաձգային, ներառեալ խոշոր տրամաչափի զինատեսակներ: Այս մասին կը յայտնեն ՀՀ պաշտպանութեան նախարարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութիւնէ:

Տուեալներուն համաձայն Օգոստոս 5-6 ժամանակահատուածին հայ-ազրպէյճանական պետական սահմանագոտիին վրայ հրադադարը խախտուած է 56 անգամ: Տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներէ հայ դիրքապահներու ուղղութեամբ արձակուած է աւելի քան 7175 կրակոց:

Հայկական կողմէն պատասխան կրակ բացուած է 28 անգամ: Հակառակորդին ուղղութեամբ արձակուած է 5025 կրակոց: Անցած 6-7 ժամանակահատուածին եւ առաւօտեան, հակառակորդի կողմէ հրադադարը խախտուած է 39 անգամ: Տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներէ հայ դիրքապահներու ուղղութեամբ արձակուած է աւելի քան 546 կրակոց:

Հայկական կողմէն պատասխան կրակ բացուած է 8 անգամ: Հակառակորդին ուղղութեամբ արձակուած է 232 կրակոց:

Հայկական կողմէն տուածները չկան:

ՀՀ զինուած ուժերը կը շարունակեն վստահօրէն վերահսկել սահմանային իրավիճակը սահմանագիծի ամբողջ երկայնքով, խստօրէն կը հետեւին հրադադարի պահպանման եւ իրավիճակին, համարժեք գործողութիւններու կը դիմեն միայն հակառակորդին կողմէ արձանագրուող նպատակային խախտումներու պարագային:

ՄԷՅՐԱՆ ՕՀԱՆԵԱՆ ԶԵԿՈՒՅԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԻՆ

(Շարունակուած Ա. Էջէն)

չի լուագել: Բացի հայկական դիրքերի ուղղութեամբ կրակոց-ներից, մշտական զննարկութեան տակ են գտնուած սահմանամերձ խաղաղ բնակավայրերը, հիմնականում Տաւուշի մարզում: Հակառակորդի կողմից օգտագործուած են մեծ տրամաչափի զինատեսակներ, ինչպիսիք են ձեռքի հակատանկային եւ հաստոցային աւտոմատ նռնակները, 23 միլիմետրանոց գէ-նիթային կայանքներ, 82 միլիմետրանոց ականները:

Նշուած ժամանակահատուածում իրականացուած տիրերային հետախուզական ներթափանցման գործողութիւնները եւ փորձ-ընթացը նախ ասեալով, որ այդ գործողութիւնները դժուար է որակել որպէս զուտ տիրերային բնոյթի՝ իրենց ինթենսիւթեամբ եւ ծաւալներով, քանի որ շատ անգամ իրականացուել են նաեւ ցերեկային պայմաններում, մեծ խմբերով՝ բացայայտ կերպով ուղղուած հայկական յենակներին գրամանը, ինչը նրանց հազորդում է անկայտ յարձակողական մարտական գործողութիւնների բնոյթ: Ինչպէս գիտէք, այդ բոլոր փորձերը ձախողուել են: Տաւուշ սրտի, մենք ունեցել ենք կորուստներ. մարտական գործողութիւնների ժամանակ հայկական կողմից զոհուել են զինծառայողներ 2օրիկ ժիրայրի Գեորգեանը, Գոռ Բաբկէնի Գրիգորեանը, Արարատ Վաչիկի Խանոյեանը, Մարգիս Արմէնի Մովսիսեանը, Ազատ Արթուրի Ասոյեանը, Խաչատուր Լեւոնի Բաղդասարը, Արամ Մկրտչի Գրիգորեանը: Նրանք յետ մահու արժանացել են Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պետական պարգևների: Ես գտնուեմ եւ, որ նշուած զինծառայողների, ինչպէս նաեւ զինուած ուժերի հրամանատարական կազմի եւ դիւերային-հետախուզական գործողութիւնները հետ մղած համագործակցող ստորաբաժանումների եւ նաեւ պատժիչ գործողութիւններ իրականացրած յատուկ նշանակութեան ստորաբաժանումների գործունէութեան արդիւնք է, որ մենք կարողացանք արժանապատւօրէն այդ մարտահրաւերից դուրս գալ եւ բարձրացնելով զինծառայողների մարտական ոգին՝ Հայաստանի Հանրապետութիւնում նաեւ ստեղծել ընդհանուր միաբանութեան, միասնականութեան եւ համախմբման ոգի:

Հակառակորդի կողմից իրականացուած են այս ժամանակահատուածում նաեւ այլ գործողութիւններ. յայտարարուել է ողջ անձնակազմի հաւաք, բերուել են ծառայութեան ուժեղացումը, մտցուել են զօրանոցային վիճակներ, արձանագրուել են անձնակազմի զինտեխնիկայի տեղաշարժեր գրեթէ բոլոր զօրամիավորումների պահպանութեան գոտիների դիմաց, իրականացուած է անհրաժեշտ ինքնապաշտպանութեան ուղղութեան պաշտպանութեան առաջնային զօրի երկայնքով, որոշ ստորաբաժանումներ՝ խցում են նաեւ երկրորդ շարակազմի, բերուել են մարտական պատրաստակալութեան բարձր աստիճանի, հրամանատարական կետերի բացազատում, առաջնագծում աջօրէնացել են հակառակորդի անօդաչու թռչող սարքերի թռիչքները, տեղեկատուական եւ քարոզական միջոցառումների շրջանակներում Ազրպէյճանի ռազմաքաղաքական ղեկավարութիւնը շարունակուել է ապաստեղծատուութեան տարածումը:

Ինչպէս գիտէք, ազրպէյճանական մի քանի շտաբներում նրանք երկայնքով են այնպէս, որ յարթակներին իրենք են տարել, եւ հայկական կողմը մեծ կորուստներ է տուել: Կորուստների յարաբերակցութիւնը, եթէ այսօր համեմատենք, 1/8 եւ 9, այսինքն՝ 8-9 անգամ նրանք աւելի շատ կորուստներ են ստացել: Որոշ սահմանամերձ բնակավայրերում, շրջաններում իրավիճակի սրումը Ազրպէյճանի Հանրապետութեան գիւղի բնակիչների մօտ առաջացրել է խուճապ եւ արտահոսք: Այդ կապակցութեամբ սահմանամերձ տրանկառոյց բնակավայրերում ուժեղացուել է վարչական եւ ոստիկանական ռեժիմը: Նաեւ որոշակի քայլեր են իրականացուած զօրահաւաքային պլանների ճշգրտման, զգուշացման ուղղութեամբ: Հակառակորդի կողմից նման գործողութիւններն անսխալեպ են 1994 թուականից յետոյ: Տուեալ գործողութիւնների վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ ազրպէյճանական կողմը չի սահմանափակուել զուտ հրադադարի խախտումներով եւ իրականացումով է աւելի լայնամասշտաբ գործողութիւնների նախապատրաստական աշխատանք: Այս ամենը, կարծում եմ, հետեանք է նրանց հռետորաբանութեան եւ նպատակ ունի բանակցային գործընթացի վրայ ազդելու եւ նաեւ ներքին լարակի համախմբման եւ պարտաւոր թերաբ-ժեքութեան վերացման եւ զինուած ուժերի ոգու բարձրացման:

ԼԻԲԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒԲԵՐ

- Կրթական նախարար Իլիաս Ապուսապ երկէ առաւօտեան հանդիպում մը ունեցաւ կրթական մարզի պատասխանատուներուն հետ: Նախարարը կը մայ պետական ընկերութիւններու մասնակիցներուն հաստատագիր յանձնելու իր տեսակէտին վրայ:

- Ներքին գործոց նախարար Նուհատ Մաշուր ղիտել տուաւ, որ Սեուտական Արաբիոյ Ապտալա Պըն Ապտէ Ազիզ վեհապետին կողմէ լիբանանեան բանակին մէկ միլիար տոլար գումարի օժանդակութիւնը կ'ապացուցէ վեհապետին ռազմավարական միտքին ճկունութիւնը:

ՓԵՏՄԱՐԿԱՆՆԵՐԸ ԿԸ ԽՈՍՏԱԿՆԱՆ...

(Շարունակուած Ա. Էջէն)

Սակայն, փէշմարկաներու հարցով նախարարութեան բանբեր գօր. Հեյրիտ Հիբաթ յայտնեց, որ ներկայ ճակատամարտ կը բարկանայ քանի մը հանգրուաններէ. առաջին հանգրուանը աւարտած է եւ «շուտով աւետիս մը պիտի տանք»:

Միւս այդ, իրաքեան օդուժին եւ փէշմարկաներուն միջեւ գործակցութիւնը կը շարունակուի: Քրտական շրջանի խորհրդարանի բանբեր Թարեք Ճոհար յայտնեց, որ փէշմարկաներու հարցով նախարարութեան եւ Իրաքի պաշտպանութեան նախարարութեան միջեւ գործակցութիւնն ու համակարգումը «դրական քայլ են»՝ իսկ ծայրայեղականներուն դէմ ճակատամարտը արագ կերպով վճռելու ուղղութեամբ:

Իրաքի վարչապետի գրասենեակը յայտարարեց, որ իրաքեան օդուժին կողմէ ռմբակոծումը մը պատճառով, Մուսուլի մէջ սպանուած են իսլամ ծայրայեղական 130 զինեալներ, ներառեալ ղեկավարներ:

Նաեւ, Պաղտատի մօտ Իրանի դեսպան Հասան Տանահի յայտարարեց, որ Իրան պատրաստ է Մուսուլ քաղաքէն տեղահանել ըրիստոնէայ գաղթականներու տառապանքները մեղմացնելու՝ ցաւ յայտնելով իրաքեան հասարակութեան եւ մասնաւորաբար ըրիստոնէաներուն վրայ ծայրայեղականներու յարձակումներուն պատճառով վնասին համար: